ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

23 հունվարի 2026 թվականի թիվ 0068-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ *որոշում եմ.*

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	չափաբաժնի գինը ՀՀ դրամ	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՍՄՍՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/25	1	Ծառայողական ավտոմեքենա	24800000	ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ	3584501	Այգեստանածք 4թղմ./Այգեստանակ/115 Ձորաղբյուր 2224 Ջրվեժ Կոտայքի Հայաստան	14.01.2026թ.	Միսիան համայնք	Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման պահանջները մասնակցին տրվել է ներկայացված փաստաթղթերի շտկման հնարավորություն, սակայն մասնակցի կողմից չի կատարվել հրավերով սահմանված պահանջների ամբողջական շտկում, մասնավորապես հրավերով ներկայված է եղել որ Արագացում 0-ից մինչև 100 կմ/ժ առնվազն 5,3 վկր, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է, Արագացում 0-ից մինչև 100 կմ/ժ 4.8 վկր, ուստի հիմք ընդունելով վերոնշյալ որոշման 32-րդ կետի 19-րդ մասի պահանջները համաձայն որի 19) եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:	Առկա չէ

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրազեկմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Հ. Առաքելյան**

2026թ. հունվարի 23
ք.Սիսիան